ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԳԸ
ՊԱՏՄԱԳԻՐ ԵՎ ԴԱՎԱՆԱԲԱՆ

ՎՐԵԺ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հովհաննես Սարկավագը (Իմաստասերը) (մոտ 1045–1129) ապրել և ստեղծագործել է Զաքարյանների Հայոց պետության մեջ: Բախտորոշ այդ ժամանակաշրջանում Հայոց աշխարհը համեմատաբար խաղաղ ժամանակաշրջան էր ապրում, բարենպաստ պայմաններ էին ստեղծված գիտության, մշակույթի տարբեր ճյուղերի զարգացման համար: Վանական հաստատությունները վերածվել էին ուսումնագիտական բաբախուն կենտրոնների: Սարկավագի աշխարհայացքը, պատմահայեցողությունը ձևավորվեցին «մենաստանների մայրաքաղաք» հռչակված Հաղբատավանքում: Նրա հասարակական-քաղաքական և գիտական հավատամքի վրա զգացվում է իր դարի դրոշմը:

Մանուկ Աբեղյանը Հովհաննես Սարկավագին դիտում է որպես «մեր վերածնության նոր մտավոր հոսանքի առաջին արտահայտիչներից մեկը»[1], որը պահանջում էր բանականությամբ թափանցել բնության գաղտնիքների մեջ, ճանաչել շրջապատող աշխարհը: Բնությանն առաջնություն վերապահելը «կարող էր ծագել միայն վերածնության դարում իբրև հետևանք այն նոր ոգու և ազատախոհության, որ առաջ էր եկել կյանքի մեջ» և սկսում էր գերիշխել «պարզությունն ու բնական մտածողությունը»[2]: Ղևոնդյանց նահատակներին նվիրված շարականում Սարկավագը Հայոց եկեղեցուն կոչ է անում Հայրենի երկրում ժողովել և փրկել հայ ժողովրդի տարագիր զավակներին՝ արտահայտելով դարի պահանջն ու ակնկալիքները[3]: Սարկավագ վարդապետը, փաստորեն, սկզբնավորում է հայրենասիրական գաղափարախոսությունը հայ բանաստեղծության մեջ[4]: Նա պահանջում է նաև, որպեսզի ձեռք բերված գիտելիքների հավաստիությունը ստուգվի փորձով: Ղևոնդ Ալիշանն իրավամբ նշում է, որ Հովհաննես Սարկավագը եղավ «նորոգող ուսմանց … ինչ որ ԺԵ դարուն մէջ սկսան եվրոպացիք»[5]:

Հովհաննես Սարկավագը գրել է պատմական երկասիրություն, որից պատառիկներ են պահպանվել: Կիրակոս Գանձակեցու հավաստմամբ, սելջուկ-թյուրքերի պատմությունը «մինչև ցՄելիքշահ սուլթանն գրեալ էր զպատճառս

---

[1] *Մ. Ա բ ե ղ յ ա ն. Երկեր, հ. Դ, Երևան, 1970, էջ 63:*

[2] *Նույն տեղում, էջ 82:*

[3] *Տե՛ս նույն տեղում, էջ 71–72:*

[4] *Այս մասին տե՛ս՝ Ս. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Մանուկ Աբեղյան, կյանքն ու գործը, Երևան, 1970, էջ 354–355:*

[5] *Ղ. Ա լ ի շ ա ն. Սարկաւագ Սոփեստէս.– Յուշիկք հայրենեաց Հայոց, հ. 2, Վենետիկ, 1921, էջ 262–263:*

տիրելոյն նոցա մեծիմաստ վարդապետին, որ Սարկաւագն կոչէր…»[6]: Պատմագիրը նշում է, որ Հովհաննես Սարկավագը նույն գործում շարադրել է նաև Մելիքշահի հոր՝ «զարիւնախանձին Ալփասլանայ և զնորին հօր և հաւուց» պատմությունը[7]: Սամուել Անեցի ժամանակագիրը նշում է, որ ինքը տեսել է Սարկավագի շարադրած պատմական երկը, և որ վերջինս խոստացել է սելջուկների պատմությունը «դարձեալ գրել արուեստաբան և երկայն ճառիւք»[8]: «Ճառ» եզրույթն ունի նաև «պատմություն» իմաստը (նշյալ հատվածում այն ունի «պատմութեամբ» ընթերցվածը):

Հովհաննես Իմաստասերի պատմական երկից մեջբերումներ է արել նրան աշակերտած Սամուել Անեցին, որի վկայություններից երևում է, որ Սարկավագը նշված գործում գրել է նաև խաչակրաց արշավանքների մասին[9]: Կիրակոս Գանձակեցու վկայությամբ Սարկավագը շարադրել է նաև «Ճառս ներբողականս ի մեծազօր արքայն Հայոց Տրդատ, և ի սուրբ հայրապետն Ներսէս, և ի սքանչելին Սահակ և Մեսրոպ…»[10]:

Պահպանվել է Հովհաննես Սարկավագի «Ժամանակագրություն» գործը, որը, ըստ էության, պետք է դառնար նրա պատմական երկասիրության ժամանակագրական խարիսխը: Այդ գործը նրա «Պատճէն տոմարի» աշխատության մի մասն է, որով գիտնականը ջանացել է ժամանակագրական փաստերով հագեցնել նաև իր տոմարագիտական երկերը: Սարկավագն իր «Ժամանակագրությունը» հիմնականում քաղել է համաշխարհային պատմական ընթացքի քրիստոնեական ըմբռնման սկզբնավորողներից մեկի՝ Եվսեբիոս Կեսարացու (264–340) «Եկեղեցական պատմություն» երկասիրությունից և փորձել է յուրովի իմաստավորել պատմական անցյալը: Սարկավագի կարծիքով մարդն ի զորու չէ որոշել տիեզերքի արարչության ժամանակը: «Ոչ է մեզ գիտել զժամս և զժամանակս, զոր Հայր եդ յիւրում իշխանութեան»,– գրում է նա, նաև հավելելով, որ մարդը կարող է սոսկ իմանալ, թե Ադամը երբ է արտաքսվել դրախտից, բայց տիեզերքի սկզբնավորման ժամանակը գիտե միայն այն արարողը[11]: Իր մեկ այլ աշխատության մեջ Սարկավագը կարծում է, որ երկրագունդն ստեղծվել է բնական ճանապարհով՝ իր հիմքում ունենալով «արփին», «անբավ նյութը»[12]:

«Ժամանակագրության» մեջ, հենվելով սուրբգրային տեղեկությունների վրա, Սարկավագը փորձել է որոշել դարակազմիկ իրադարձությունների՝ ի մասնավորի տիեզերաժողովների և Հայոց մեծ թվականի միջև ընկած տարիների ընթացքում տեղի ունեցածը: Իբրև պատմարժան եղելություններ, համառոտակի հիշում է նաև Հայաստանում քրիստոնեության սկզբնավորող Թադեոս

---

[6] *Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի. Պատմութիւն Հայոց, աշխ. Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 84:*

[7] *Նույն տեղում:*

[8] *Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 119:*

[9] *Տե՛ս նույն տեղում, էջ 120:*

[10] *Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի. Պատմութիւն Հայոց, էջ 113:*

[11] *Տե՛ս Անանուն ժամանակագրություն (XIII դ.).– Մանր ժամանակագրություններ XIII–XVIII դդ., հ. I, կազմեց Վ. Հակոբյան, Երևան, 1951, էջ 22–23:*

[12] *Տ ե՛ ս Կ. Մ ի ր ո ւ մ յ ա ն. Հովհաննես Սարկավագի աշխարհայացքը, Երևան, 1984, էջ 63:*

առաքյալի, Գրիգոր Լուսավորչի և նրա հետևորդների, Բյուզանդիայի կայսրերի, արաբական արշավանքների և այլ իրողությունների մասին[13]:

Սարկավագի կարծիքով պատմությունը ծավալվում է ոչ միայն ժամանակի, այլև տարածության մեջ: Իր «Հակաբանություն հնագիտական» գործում նա կարծում է, որ առանց պատմական եղելությունների տեղն ու ժամանակը որոշելու, հնարավոր չէ ապացուցել դրանց հավաստի լինելը և բացահայտել իրադարձությունների բուն էությունը: «Թէպէտ,– գրում է հեղինակը,– և դիտաւորութիւն իրին առաջիկայի բազում անգամ ի մակագրութենէ բանին դիւրածանօթապէս կարէ ոք ի միտ առնուլ համառօտագոյն, սակայն առանց զժամանակն գիտելոյ և զտեղին, ոչ պահի օրէն հաւաստութեանն յեղանակին և պատճառին հանդերձ դիմօքն առաջի կացելոյ»[14]:

Հովհաննես Սարկավագի ապրած ժամանակաշրջանում պատմության նպատակը միտում էր ապագային՝ երկնային կյանքին, և ներկան իմաստ էր ստանում ու արդարացվում սոսկ դրան արժանանալու դիտանկյունից: Բայց Սարկավագն առաջ է անցնում իր դարից, գրելով՝ «Ի ներկայէ երևին… ոչ միայն անցեալն, այլև ապառնին»[15]: Նաև շեշտում է, որ՝ «տեսանել ի օրինակաւս իմանամք և քննեմք զառաջիկայն՝ որ լինելոց է»[16]: Այդպիսով, նա նախապատվություն է տալիս երկրային կյանքին, մարդկային գործոնին, այն համարելով պատմական ընթացքի առաջմղիչ ուժը: Իր «Լուծմունք Եօթնից գրոցն Փիլոնի իմաստասիրի Եբրայեցւոյ» մեկնողական երկում Սարկավագը մերժում է ճակատագրապաշտությունը, աստղագուշակությունը, քանզի դրանք թույլ չեն տալիս գիտականորեն վերլուծել պատմական երևույթները: Նա ծառանում է «ընդդէմ այնոցիկ, որ զամենայն ինչ ի ճակատագրէ ասէն. մի՞թէ նոքա որ ի …պատահմանէ մեռանին, ի ճակատագրէ լինի»[17]: Ըստ այդմ, հայ ժողովրդին բաժին ընկած արհավիրքները ոչ թե ճակատագրի քմահաճ խաղերի հետևանք են, այլ տեղի են ունենում պատմական պայմանների թելադրանքով: Հետևաբար, ժողովուրդն է իր քաղաքական ճակատագրի տերն ու տնօրինողը և ի զորու է ներգործել նրա վրա, վերջ տալ նրա դաժան խաղերին: Այդպիսով, Սարկավագը կամենում է հարազատ ժողովրդին հուսապնդել դիմակայելու թշնամիներին, ապավինել սեփական ուժերին՝ թե ներքին և թե արտաքին խնդիրները լուծելիս: Նա հույս է ակնկալում, որ այդ կերպ հայերը կարող են պահպանել իրենց քաղաքական և հոգևոր անկախությունը: Միաժամանակ տուրք տալով իր դարաշրջանի մտահայեցությանը, նա երկրային խնդիրների լուծումը տեղափոխում է երկինք՝ ապավինում Աստծուն[18], իհարկե, բացառելով ճակատագրի միջամտությունը մարդկանց անձնական և հասարակական կյանքում:

---

[13] *Տե՛ս Անանուն ժամանակագրություն (XIII դ.), էջ 22–24:*

[14] *Ա. Ա բ ր ա հ ա մ յ ա ն. Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը (այսուհետև՝ Մատենագրություն), Երևան, 1956, էջ 146:*

[15] *Նույն տեղում, էջ 247:*

[16] *Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), ձեռ. 2595, թ. 242բ:*

[17] *Նույն տեղում, թ. 253բ:*

[18] *Ուշագրավ փաստ է, անշուշտ, երբ Սարկավագը միայն Քրիստոսին է համարում «զվիրաց մերոց ջնջից. և զցաւոց մերոց բժիշկ» (տե՛ս Մատենագրություն, էջ 326):*

Որպես իր դարի հարազատ զավակ, Հովհաննես Սարկավագը պատմական իրողությունների պատճառները տեսնում է մարդկանց գործած մեղսավոր արարքների մեջ՝ կամենալով այդ կերպ ուղղել, ճիշտ ճանապարհի վրա դնել նրանց: Արարիչը, գրում է նա, «տեսեալ յանդարձութեան զազգս մարդկան և չշահեալ ինչ յերկայնամտութենէն, ի տանջանս հարուածոց մեզ ներգործէ, որպէս զի և զայլս ի վերայ [երկրի] ի պատուհասս»[19]:

Խորատես գիտնականը, անշուշտ, կարողանում էր ճիշտ մտահայելով կողմնորոշվել ո՛չ միայն անցյալի, այլև իր ժամանակի կացության ելևէջներում: Նա քաջ գիտակցում էր, որ պետականության պահպանման շնորհիվ է հնարավոր ապահովել Հայաստանի բնականոն գոյատևումն ու զարգացումը և նրան զերծ պահել թշնամիների ասպատակումներից, կոտորածներից:

Սարկավագն այն համոզմանն էր, որ չպետք է երկիրն «առանց վերակացուի թողել. և ոչ զօրք առանց զօրավարի. և քաղաք առանց դատաւորի»: Նրա կարծիքով պետականությունը մարմնավորող թագավորի, իշխանների անձերն անձեռնմխելի են: Եվ եթե որևէ մեկը հանդգնի սպանել նրանց, այնժամ «ոչ միայն զսպանօղն այլ և զազգն ջնջել ջանան որ այլքն երկնչին»[20]: Նա ամենողորմ Աստծուց խնդրում է ոչնչացնել Հայաստանի դեմ որոգայթներ նյութողներին, որպեսզի «դարձեալ փառաւորեսցի ժողովուրդ քո բարետոհմիկ և սիրեցեալ… հալածե՛ա զերկաքանչիւրոցն յանդգնութեամբ վերայ մեր յարձակմունս»[21]: Գիտնականը, անշուշտ, նկատի ունի սելջուկ – թյուրքերին, որոնց մասին, ինչպես նշվեց, նա հեղինակել է պատմական երկ: Գուցե 1090 թ. Անիից Բարսեղ կաթողիկոսի գլխավորությամբ սելջուկների սուլթան Մելիքշահի մոտ մեկնած պատվիրակության կազմում ընդգրկված է եղել նաև Հովհաննես Սարկավագը[22], որպես սելջուկ-թյուրքերի պատմության քաջագիտակ վարդապետ:

Պատմական և բնական երևույթների մեկնաբանման ընթացքում ճշմարտության հանգելու համար, Սարկավագը մեծ նշանակություն է տալիս դրանց պատճառների բացահայտմանը: Նա այն համոզմանն է, որ աշխարհում բոլոր երևույթներն ունեն իրենց պատճառները: Իր «Յաղագս յարակայի, վերադրաց եւ բոպէից» աշխատության մեջ նա գրում է, որ «կարծեաւք և առանց պատճառի գիտության ո՛չ ասի և ո՛չ մակացութիւն՝ գիտութէան»[23]: Ըստ այդմ, առանց պատճառները բացահայտելու, գիտությունը չի կարող իր բարձրության վրա լինել և որևէ բան ապացուցել: Նրա կարծիքով իսկական ճշմարտությանը կարելի է հասնել միայն գիտության՝ («ըստ արուեստի և մակացութեան») շնորհիվ՝ հեռու մնալով կեղծիքից, հետևելով «բազմուսումնութեան և զջան հանճարագիտութեան»: Ընդսմին, դատապարտում է փառատենչ նպատակներով գիտունի կերպարանքով պճնվողներին: «Որպէս տեսանեմք,– գրում է գիտնակա-

---

[19] *Նույն տեղում, էջ 304:*

[20] *ՄՄ, ձեռ. 2595, թ. 248ա:*

[21] *Աղօթամատոյց Յովհաննու Սարկաւագայ վարդապետի.– Սոփերք հայկականք, հ. ԺԷ, Վենետիկ, 1854, էջ 33–34:*

[22] *Կ. Մ ա թ և ո ս յ ա ն. Հովհաննես Սարկավագի պատմական թղթերն ըստ Սամվել Անեցու.– Հայոց պատմության հարցեր, 6, Երևան, 2005, էջ 128:*

[23] *Մատենագրություն, էջ 256:*

նը,– ձևանալ զբազումս առ ախտի փառամոլութեան զգիտնոց կերպարանս ունել…»[24]: Իմաստասերը նաև նշում է, որ «ամենայն բազում ուսումնասիրութիւն, նուազ և անարգ է առանց երկիւղին և սիրոյ Աստուծոյ», և որ «սովորութիւն է եկեղեցեաց Աստուծոյ զճշմարտութեանն վարել զհետ, և նոյն խնդրել և ընդ նոյն ընթանալ շաւիղ»[25]: Ուրեմն, Հայոց եկեղեցին ընթանալով Աստծու սահմանած ծիրով, պահանջում է գնալ նույն շավղով:

Սարկավագը բոլոր գանձերից առավել է համարում հոգու տքնությամբ մտավոր գանձեր կուտակելը: «Լաւ է,– գրում է նա,– զվաճառն զայն բազմախոնջ և աշխատեցուցիչ մտաց և մարմնոյ գտնել, քան զբովանդակ գանձս ոսկւոյ և արծաթոյ»[26]: Քրիստոնեությունը միջնադարում բարոյապես կատարյալ էր համարում երկրային բարիքներից, գանձից, հարստությունից, իբրև բոլոր չարիքների աղբյուրից հրաժարվողներին: Ե դարի ականավոր աստվածաբան Ավգուստինոսը (354–430 թթ.) իր երկերում պաշտպանելով ստրկությունը, մասնավոր սեփականությունը՝ որպես աստվածային կամքի արտահայտություն, միաժամանակ նյութականը, շահստացությունը համարում է մեղքի մարմնացում, շեշտելով. «Մենք հարուստներ ենք համարում առաքինի, արդարակորով մարդկանց, որոնց համար փողը նշանակություն չունի… իսկ աղքատներ ենք համարում ժլատ մարդկանց, որոնք միշտ տենչում են հարստություն ձեռք բերել»[27]: Ինչպես տեսնում ենք, Ավգուստինոսի և Սարկավագի մտքերն այստեղ համահունչ են:

Հովհաննես Սարկավագն օրինաչափ է համարում հասարակության դասային բաժանումը, գրելով. «Թէպէտ բանականութեամբն մի ասեն իշխանն և ռամիկն, դատաւորն և քաղաքացին, սակայն գործով որոշեալ են ի միմեանց. և թէ որ հաւասարէ զտոսայ և ընդ միմեանս զուգէ, մոլորի ի ճշմարիտ կարգէն»[28]: Նկատենք նաև, որ առաջնությունը վերապահում է հոգևոր դասին: «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ» աշխատության մեջ Սարկավագն այն միտքն է հայտնում, որ «աստեղք նաւորդաց առաջնորդեն և քահանայք՝ երկրի», բայց միաժամանակ չի վարանում նշել, որ նրանք «առաջնորդք եթէ մառախլադատ կենցաղավարին՝ քոդասուզել կամելով զանարժան լուսոյ զգործս իւրեանց, գայթակղութիւն երկրի ոչ սակաւ լինի…»[29]:

Հովհաննես Սարկավագը կողմնակից է պատմական ստույգ ժամանակագրության՝ իբրև ճշմարտությունը վեր հանելու հուսալի միջոցի: Նրա գիտական ավյունը վառ դրսևորվեց նաև այդ բնագավառում: Սարկավագի կատարած տոմարական բարեփոխությունները հիմք ծառայեցին նրա կողմից ստեղծված ժամանակագրական համակարգի համար: Նա կազմեց անշարժ («Սարկավագադիր») տոմար՝ հաշվի առավ այն հանգամանքը, որ նախորդ մատենագիրներն

---

[24] *Նույն տեղում:*

[25] *Նույն տեղում, էջ 250:*

[26] *Նույն տեղում, էջ 251:*

[27] Творения Блаженного Августина, епископа Иппонийского. Киев, 1880, с. 356.

[28] *ՄՄ, ձեռ. 2595, թ. 261բ:*

[29] *Մատենագրություն, էջ 232:*

իրենց երկասիրություններում առաջնորդվել էին Հայոց մեծ թվականով: Ընդ որում, Ս. Գրքի ժամանակագրությունը նշելիս ևս նրանք առաջնորդվել են այդ թվականով: Սարկավագը թեև կիրառում է ժամանակագրական տարբեր (չորս) համակարգեր, բայց առաջնություն է տալիս Եվսեբիոս Կեսարացու «Յոթանասնից» կոչված ժամանակագրությանը և Հայոց մեծ թվականին[30], որի սկզբնավորումից հետո նա բացառիկ դեպքերում է օգտվում մյուս թվականներից: Բայց քանի որ Հայոց մեծ թվականը շարժական էր, և տարին միշտ ունենում էր 365 օր՝ առանց նահանջ տարվա, ուստի 1085 թ. օգոստոսի 11-ին նա կարգավորում է 532-ամյա զատկացանկի 2-րդ շրջապտույտի տոմարական իրողությունները՝ ստեղծելով իր անշարժ տոմարի նախագիծը: Այդ նոր («Սարկավագադիր») թվականով որպես տարեգլուխ, նա ընդունեց մինչ այդ կիրառվող հայոց եկեղեցական տարվա սկիզբը՝ հունվարի 6-ը[31]: Անշարժ տոմարի ներմուծմամբ հնարավոր դարձավ որոշել պատմական իրադարձությունների ստույգ ժամանակը (հաշվելով հայկական ամիս-ամսաթվերով) և լիովին անկախ լինել հունա-հռոմեական, եբրայական և օտարամույծ ուրիշ համակարգերից[32]:

Պատմական ստուգության նախանձախնդիր գիտնականը մերժում, խոցելի է համարում առասպելական պատմությունները: «Վասն Կիկլոպացոյց երկրին զինչ որ ասեն սուտ է»[33],– գրում է Սարկավագն իր «Լուծմունք եօթնից գրոցն Փիլոնի» գործում: Իսկ «Հակաբանութիւն հնագիտական» աշխատության մեջ խոստանում է դատափետել «զառասպելական կարծիս՝ զճշմարտութիւն յանդիման ի գրոց կացուցանելով, և զժամանակին հեռավորութիւն ի ներքոյ դրոշմելով՝... զխորհուրդս բազմաց ի հաւաստոյն ուսմանէ կացուցցուք»[34]:

Հովհաննես Սարկավագի պատմահայեցողությունը սերտորեն առնչվում է նաև նրա դավանական դիրքորոշման հետ: Իր երկերում նա հանդես է գալիս որպես հայ դավանության, Հայոց եկեղեցու հետևողական պաշտպան և ջատագով: Խորահմուտ գիտնականի բեղուն գրչի տակ բյուրեղացած է Հայոց հավատքի և ինքնության սնեռուն գաղափարը: Սարկավագի համար հայոց դավանանքը ոչ միայն ազգային ինքնորոշման զորավոր կռվան էր, այլև քրիստոնեության արմատ-ակունքներին հավատարիմ մնալու օրինակ: Գաղափարական այդպիսի մղումներով նա դատապարտում է քրիստոնեության հիմքերը խարխլողներ Մարկիոնին (Բ դար), Ապողինարին (Դ դար), Թեոդորոս Մոպսուեստացուն (Դ-Ե դարեր), վերջինիս աշակերտ Նեստորին (Ե դար): Սարկավագը նաև քննադատում է քաղկեդոնյան երկաբնակությունը՝ որպես քրիստոնեական աշխարհում պառակտում սերմանող հոսանք[35]: Ի հեճուկս նեստորականների և նրանց զորացնող քաղկեդոնականության, նա Քրիստոսի մարդկային ու

---

[30] *Տե՛ս Անանուն ժամանակագրություն (XIII դ.), էջ 22–24:*

[31] *Տե՛ս Ռ. Վ ա ր դ ա ն յ ա ն. Հայոց տոնացույցը (4–18-րդ դարեր), Երևան, 1999, էջ 258–263:*

[32] *Տե՛ս Գ ր. Բ ր ո ւ տ յ ա ն. Յովհաննէս Սարկաւագի ժամանակագրական համակարգը, Երևան, 1999, էջ 92, 102:*

[33] *ՄՄ, ձեռ. 2595, թ. 248բ:*

[34] *Մատենագրություն, էջ 140:*

[35] *Տե՛ս ՄՄ, ձեռ. 6453, թ. 142բ-143բ:*

աստվածային բնությունները դիտում է «անճառ միավորության» մեջ՝ ի մտի առնելով «Մի բնութիւն Բանին Աստուծոյ մարմնացելոյ ըստ ճշմարտութեան» դավանական բանաձևը[36]:

Հայ առաքելական եկեղեցու դավանաբանությունը ավարտուն տեսքի բերած Հովհան Օձնեցի կաթողիկոսի (717–728) հետևողությամբ Սարկավագը գտնում է, որ Հայոց եկեղեցին պատվում, մեծարում է խաչը, մինչդեռ նրանք, ովքեր հետևում են «կորստական աղանդոյն Նեստորի... և ժողովոյն Քաղկեդոնի, զնոյն ինքն զխաչեալն ուրանան Աստուած գոլ և զխաչն պատուել կեղծաւորին»[37]:

Խաչի պաշտամունքը խորհրդանշում էր հայոց դավանական անկախությունը՝ մերժելով քաղկեդոնական եկեղեցու սրբազնագործած պատկերապաշտությունը, որը ծագել էր Բյուզանդիայի կայսերականացված եկեղեցու ազդեցության ոլորտներում: Սարկավագը կտրուկ դեմ է արտահայտվում պատկերապաշտությանը[38]:

Հայոց դավանական ինքնորոշման նախանձախնդիր գիտնականն իր «Հակաբանութիւն հնագիտական» և «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ» արժեքավոր գործերում գրում է. «Քակտեալ կործանեսցուք զօրութեամբ Աստուծոյ ի հարցն բանից և աւանդութեանց» ու Նեստորի և Լևոն պապի «զանօրէն իմացմունս» իբրև «չարագործ հավատի» սկզբնավորողների[39]: «Ժողով ամպարշտացն, որ ի Քաղկեդովնի Բիւթանացւոց,– նշում է Սարկավագը,– քարոզեցին զանօրէնութեանն և անաստուածութեանն հաւատոյ արձանն»: Լևոն պապը իր գաղափարները ստանալով Թեոդորոս Մոպսուեստացուց՝ «զմիաւորութիւնն և քակտել նկրտի»[40]:

Հովհաննես Սարկավագը հորդորում է չհարել քաղկեդոնական դավանությանը: Նա անգամ այն դիտում է իբրև հերձված, որը խարխլում է Հայոց եկեղեցու հիմքերը: Իր «Յաղագս քաղկեդոնականացն» գրվածքում նաև դատապարտում է հերձվածողներին, գրելով. «Որչափ հնար է հեռանալ պարտ է ի հերձուածողացն աղօթակցութենէ, քանզի արտաքսեալք են յեկեղեցոյ և դատապարտեալք ի հարցն. և չէ ունէք իշխանութիւն յուղղափառաց և ի տան անգամ լինիլ նոցա կցորդ աղօթից»[41]: Սարկավագը հերձված է համարում նաև նեստորականությունը, այն դիտելով քաղկեդոնականությանը գաղափարամերձ հոսանք: Նրա «Եկեղեցական պատմություն» երկից պահպանված հատվածում[42] և այլ գործերում սուր քննադատության է ենթարկվում նաև Գ դարում ի հայտ եկած Պողոս Սամոսատցու աղանդը: Վերջինս, գրում է Սարկավագը, «արտաքոյ եկեղեցոյ խորհեցաւ ի վերայ Քրիստոսի դուզնաքեայ մարդ ասելով»[43]: Նկա-

---

[36] *Նույն տեղում, թ. 188ա:*
[37] *ՄՄ, ձեռ. 6453, թ. 145ա:*
[38] *Նույն տեղում, թ. 147բ–149բ:*
[39] *Մատենագրություն, էջ 140, 234:*
[40] *Նույն տեղում, էջ 146–147:*
[41] *ՄՄ, ձեռ. 6453, թ. 143բ:*
[42] *Մատենագրություն, էջ 137, նաև՝ էջ 141:*
[43] *Նույն տեղում, էջ 137:*

տենք, որ Հովհաննես Սարկավագի կրտսեր ժամանակակից Ներսես Շնորհալին իր թղթերից մեկում Պողոս Սամոսատցուն դասում է քրիստոնեական եկեղեցու երդվյալ հակառակորդների շարքը[44]: Սարկավագը «Հակաբանութիւն հնագիտական» աշխատության մեջ գրում է, որ Պողոս Սամոսատցին դառնալով Անտիոքի եպիսկոպոս, սահմանեց կանոններ և «արտաքոյ եկեղեցւոյ Աստուծոյ խորհեցաւ ի վերայ Քրիստոսի», որին «ոչ կամի խոստովանել որդի Աստուծոյ և իջեալ յերկնից»[45]:

Պողոս Սամոսատցու աղանդի հերքումը Սարկավագի ապրած դարաշրջանում ուներ սուր հնչեղություն, քանի որ առնչվում էր Հայոց եկեղեցու հիմքերը խարխլող թոնդրակյան աղանդի հետ: Թոնդրակյաններն իրենց համարում էին Պողոս Սամոսատցու հետևորդներ[46]:

Հայոց եկեղեցու և նրա դավանության պաշտպանությանն է միտված նաև Հովհաննես Սարկավագի «Հարցումն առ Սարկաւագ վարդապետն» գրվածքը, որտեղ իմաստասեր-գիտնականը առաջնություն է վերապահում եզակի իրերին, իբրև իրական հատկություններով օժտվածների: Նա գտնում է, որ ընդհանուրը ճանաչելու համար ամենից առաջ անհրաժեշտ է ճանաչել եզակին և այդ հիման վրա գաղափար կազմել ընդհանուրի մասին[47]: Եզակիի տակ Սարկավագը նկատի ունի ինքնուրույն եկեղեցիներին՝ առաջին հերթին, իհարկե, Հայոց եկեղեցուն: Եզակիին առաջնություն վերապահելն ուղղված էր Բյուզանդական եկեղեցու դեմ՝ նպատակ ունենալով մերժել նրա դավանական գաղափարաբանությունը և Հայոց եկեղեցու նկատմամբ գերակայություն ունենալու նկրտումները: Դրանով իսկ նա հաստատում է Հայ եկեղեցու նախնական լինելը, դավանական ինքնագո հիմքերն ու հարատևման և ինքնուրույն գոյության իրավունքը:

Եզակիին առաջնություն տալը նպատակաուղղված էր նաև անձի անհատականության և ազատության իրավունքի ճանաչմանն ու արժևորմանը, որը Վերածնության դարաշրջանի հատկանիշն էր: «Միթէ չսխալէ,– գրում է Սարկավագը,– որ զանձն իշխանութիւն ի բաց բառնայ»[48]: Չէ՞ որ մարդն իր բնությամբ «ինքնիշխան է, և չարգել ոք զնա ի կամաց»[49]: Նա դատապարտում է անձնիշխանությունն ուրացողին, նմանեցնելով նրան սանձակոտոր ձիու[50]: Ուշագրավ է, որ, դիմելով Քրիստոսին, Հովհաննես Սարկավագը խնդրում է մարդկանց շնորհել «աստուածային բարեփառութիւն», «աստուածութիւն», «ազատութիւն»[51]:

Հայրենասեր և լուսամիտ գիտնականի մտքերը խորը հետք են թողել հայ մտաշխարհում: Դրանք գաղափարապես զինելով Հայոց առաքելական

---

[44] *Տե՛ս Ընդհանրական թուղթք սրբոյն Ներսէսի Շնորհալւոյ, Երուսաղեմ, 1871, էջ 240 և հտ.:*

[45] *Մատենագրություն, էջ 145:*

[46] V. N e r s e s s i a n. The Tondrakian Movement. Pensilvania, 1988, p. 63.

[47] *ՄՄ, ձեռ. 5259, թ. 164:*

[48] *ՄՄ, ձեռ. 2595, թ. 243բ–244ա:*

[49] *Նույն տեղում:*

[50] *Նույն տեղում, թ. 243բ:*

[51] *Տե՛ս Աղօթամատոյց Յովհաննու Սարկաւագայ վարդապետի, էջ 28–29:*

եկեղեցուն՝ ամրադրել են նրա հինավուրց հիմքերը: Հովհաննես Սարկավագի թողած գիտական ժառանգության մեջ, անշուշտ, կարևոր նշանակություն ունեն պատմական և դավանաբանական խնդիրներ շոշափող գործերը:

ОВАННЕС САРКАВАГ – ИСТОРИОГРАФ И БОГОСЛОВ

ВРЕЖ ВАРДАНЯН

Резюме

Миросозерцание и элементы историописания Ованнеса Саркавага – крупного армянского ученого первой половины XII в., формировались в условиях социально-культурного развития армянского общества той эпохи, при наличии высокой городской цивилизации. До нас дошла его Хронология, где зафиксированы некоторые события истории Византийской империи, Арабского халифата и Армении. В основе этого труда лежат его календарные нововведения. Автор задался целью воссоздать точную картину исторических эпох и причинно-следственной связи событий. По мнению Ованнеса Саркавага – функция истории заключается в фиксировании истины реальных фактов. Он предоставляет человеку важную роль в историческом процессе, отклоняет фатализм и астрологию. По его мнению, в жизни народа важнейшую роль играют реальные исторические условия. В Хронологии Саркавага история развертывается во времени и пространстве. Не сохранилось его историческое сочинение о сельджуках и крестовых походах. Фрагменты этого труда фигурируют в труде армянского хрониста XII в. Самуэла Анеци. Ованнес Саркаваг проявляет непримиримость в отношении еретиков, несторианства, а также халкидонитского вероисповедания.